ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ V, № 3, 1952 Биол. и сельхоз. науки

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Ս. Ն. Նազարյան
Հ(բ)Պ Սպիտակի շրջկոմի քարտուղար

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ԵՐԿՇԱՐՔԱՆԻ ՑԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուղեցույց ունենալով Հայաստանի Կ(բ)Պ 15-րդ համագումարի որոշումը շաքարի ճակնդեղի և գյուղատնտեսական մյուս կուլտուրաների բերքատվության բարձրացման մասին, Սպիտակի շրջանի ճակնդեղագործները գործադրեցին այնպիսի կոնկրետ միջոցներ, որոնք կրկնապատկեցին պլանտացիաների բերքատվությունը։

Ինչպես հայտնի է, բարձր բերք ստանալու անխախտ պայմանն է բոլոր այն ագրոտեխնիկական միջոցառումների անշեղ կիրառումը, որոնք կապված են հանքային պարարտանյութերի ճիշտ օգտագործման, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման, ինչպես նաև հողագործության ընդհանուր կուլտուրայի բարձրացման հետ։ Առավել ևս այդ միջոցառումները անհրաժեշտ են շաքարի ճակնդեղի նկատմամբ, որովհետև վերջինս ավելի պահանջկոտ է դրանց նկատմամբ։

Ունենալ լավ հող և կոնդիցիոն սերմացու, դեռ բավական չէ, կարևոր նշանակություն ունի, թե որքան ճիշտ է կատարված ցանքը և որքանով լիարժեք են հեկտարները։ Մինչև վերջին ժամանակները լիարժեք էր համարվում այն հեկտարը, որի մեջ կար ճակնդեղի 100—110 հազար արմատ։ Սակայն այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Ղազախական ռեսպուբլիկայի Տալգին Կուրգանի շրջանի «Մայիսի մեկի» անվան կոլտնտեսության ճակնդեղագործ օղակավարուհի Օլգա Գոնաժենկոյի փորձը, որը հեկտարից ստացել է 1515 ցենտներ շաքարի ճակնդեղ, հեկտարի լիարժեքության, այսինքն հեկտարի վրա աճող ճակնդեղի արմատների քանակի նկատմամբ նոր մոտեցում է պահանջվում։

Գյուղատնտեսության ֆրոնտի ամեն մի աշխատող, մանավանդ ճակնդեղագործը, հետևություն է անում, որ առաջավորներին հասնելու համար, ճակնդեղի ռեկորդային բերք ստանալու համար պետք է լիարժեք դարձնել հեկտարները, այսինքն պլանտացիայի մեջ արմատների հեռավորությունը լինի համաչափ և հեկտարում ունենալ առավելագույն քանակի արմատ։

Կիրառելով սովետական առաջավոր ագրոբիոլոգիայի նվաճումները, մեր շրջանի ճակնդեղագործները գործադրեցին հեկտարի լիարժեքության բարձրացման մի պարզ եղանակ։ Դա ճակնդեղի երկշարքանի ցանքի եղանակն է։ Այդ գործում մեզ օգնության եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը։ Այդ ինստիտուտի մի խումբ գիտական աշխատողների նախաձեռնությամբ երկշարքանի ցանքի սիստեմով 85 հեկտարի վրա փորձնա-

կան ցանք կատարվեց Սարահարթ, Արտագյուղ, Խնկոյան, Սպիտակ և Մեծ Պարնի գյուղերի կոլտնտեսություններում։

Գիտական նոր մեթոդով կատարված ցանքի էությունն այն է, որ ավելի ինտենսիվ է օգտագործվում վարելահողը, միևնույն տարածության վրա ավելի շատ բույս է տեղադրվում։ Ցանքի նոր ձևի միջշարքային տարածությունը առաջին շարքում 45—50 սմ է, երկրորդ շարքում՝ 20 սմ, իսկ միջբույսային տարածությունը 18 սմ։

Միջշարքային և միջբույսային այդպիսի հեռավորությունը միանգամայն նպաստավոր պայմաններ է ստեղծում յուրաքանչյուր արմատի նորմալ աճման համար։

Սարահարթ գյուղի «Չկալովի» անվան կոլտնտեսության առաջավոր ճակնդեղագործների փորձը ակնառու կերպով ցույց է տալիս երկշարքանի ցանքի հսկայական առավելությունները։ Ճիշտ է, այդ կոլտնտեսությունը պլանտացիաների տարածությամբ հետ է մնում Մ. Պարնի, Նալբանդ, Լուսաղբյուր գյուղերից. մյուս կողմից Սպիտակի շրջանի կոլտնտեսությունների մեջ նա ամենից սակավ բերքի հող ունեցող գյուղերից է։ Սակայն, շնորհիվ հողի լավ մշակության, բերքատվությամբ առաջ է անցել շրջանի բոլոր կոլտնտեսություններից։ Սարահարթի ճակնդեղագործները 43 հեկտար պլանտացիաներից պլանով նախատեսված 9 հազար ցենտներ ճակնդեղի դիմաց մթերակայան հանձնեցին 16 հազար 500 ցենտներ ճակնդեղ, այսինքն՝ ավելի շատ քան արդավանդ հող և ոռոգելի ջուր ունեցող Լուսաղբյուր գյուղը 90 հեկտարից, Ծաղկաշենը՝ 60 հեկտարից, Կաթնաջուրը՝ 70 հեկտարից և այլն։

Սարահարթցիները այդ հաջողությանը հասել են շնորհիվ այն հանգամանքի, որ ագրոկանոններին համապատասխան կատարել են հողի նախացանքային մշակությունը։

Առաջավոր ճակնդեղագործ օղակավարուհիներ՝ Բավական Սիմոնյանը և Նվարդ Քարամյանը արդեն մի քանի տարի է ճակնդեղի բերքատվության գծով իրենց առաջնությունը չեն զիջում ոչ ոքի։

1950 թ. նրանք իրենց ամրացված պլանտացիաների յուրաքանչյուր հեկտարից ստացան 300 ցենտներ ճակնդեղ։ Հայրենիքը ըստ արժանվույն գնահատեց նրանց աշխատանքը։ Ամենից առաջավոր օղակավարուհի Նվարդ Քարամյանն արժանացավ մեծ պատվի և ընտրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ։

Ոգևորված մեծ խրախուսանքով՝ Քարամյանը, նրա օղակի անդամները և մյուս մրցակից օղակների աշխատողները որոնեցին նոր ուղիներ, մեծ սիրով արմատավորեցին այն նորը, առաջավորը, որը կօգնի ճակնդեղի բերքատվության բարձրացման գործին։ Նրանք հոժարությամբ գործադրեցին երկշարքանի ցանքի մեթոդը։ Ամբողջ կոլտնտեսությունը երկշարքանի ցանք էր կատարել 15 հեկտար տարածության վրա։

Անվանի օղակավարուհի Ն. Քարամյանը իր օղակին ամրացված 5 հեկտար տարածությունից 3 հեկտարի ցանքը կատարել էր նոր եղանակով։ Երբ շարքերում երևացին առաջին զույգ տերևները և սկսվեց ճակնդեղի հետցանքյան մշակությունը, ակներև դարձավ, որ մեկ միավոր տարածության վրա ավելի շատ բույս կա, քան նրա կողքին սովորական ձևով ցանք կատարած տարածության վրա։

Սկսելով չարովկան 4—5 սանտիմետր խորությամբ առանց վնասելու մատղաշ ծիլերը, փխրեցվեց հողը, ապա առաջ մղվեցին նոսրացման և ստուգման աշխատանքները։ Դրանից հետո ավելի պարզ երևաց հեկտարի լիարժեքությունը։

Ճակնդեղի բույսերը միմյանցից այնքան համաչափ հեռավորություն ունեին, որ վերացանք կատարելու քիչ անհրաժեշտություն էր զգացվում։ Միայն հետագայում, երբ ստուգման ժամանակ վերջնականապես հեռացվում էին վատ արմատները, առաջավոր օղակավարուհիները չէին հրաժարվում սածիլման եղանակով ազատ տարածությունների վրա արմատ տնկելուց։ Պետք է խոստովանել, որ անցյալ տարվա ցանքի չոր և արևոտ եղանակների պատճառով ճակնդեղի բույսերից սածիլման այդ եղանակը հարկ եղավ գործադրել մեր շրջանի շատ կոլտնտեսություններում, հատկապես այն տարածությունների վրա, ուր ցանքը կատարվել էր սովորական ձևով։

Աննպաստ եղանակները չարգելեցին առաջավոր օղակավարուհիներ Քարամյանին և Սիմոնյանին յուրաքանչյուր հեկտարում ունենալ 160 հազար արմատ։

Հենց այդ հանգամանքն էլ կարևոր նախապայման հանդիսացավ, որպեսզի առաջավոր օղակավարուհիները գերազանցեն մինչ այդ իրենց հարևան գյուղերում եղած բերքատվության նորմաները և մեկ հեկտարից նվաճեն 452 ցենտներ ճակնդեղ։

Սարահարթի և մյուս կոլտնտեսությունների առաջավոր ճակնդեղագործների փորձը հաստատում է, որ լիարժեք հեկտարներ կարելի է ունենալ այն դեպքում երբ առաջին հերթին ճակնդեղի տակ գրվող հողը ևս լիարժեք է դարձված, այսինքն, երբ պարարտացված է քիմիական և տեղական պարարտանյութերով։

Իրավացի էր նույն այդ «Զկալովի» անվան գյուղատնտեսական արտելի անդամ՝ օղակավարուհի Ծովինար Գևորգյանը, որը իրենց ժողովում հանրագումարի բերելով իր օղակի աշխատանքները և խոսելով ճակնդեղի լիարժեք հեկտարների մասին, ասաց.

«Կար ժամանակ, որ ասում էին «սոխի սեհրակն է գալիս բոնում»։ Այժմ մենք ստիպում ենք հողին, որպեսզի նա մեզ թեկուզ խիտ ցանված ճակնդեղից խոշոր արմատներ տա»։

Ընկ. Գևորգյանը չմոռացավ կրկնել նաև ժողովատեղում իրենց ակումբի պատին փակցված մեծ գլոնական Միչուրինի նկարի տակ գրված խոսքերը.

«Մենք չենք կարող շնորհներ սպասել բնությունից, այդ շնորհները նրանից վերցնելը մեր խնդիրն է»։

Եվ եթե սարահարթցիները ճակնդեղի մշակության գործում հասել են լավագույն հաջողություններ, դա բացատրվում է նրանց ակնիվ ու լավ աշխատանքով, նրանք բնությունից չեն ակնկալում ողորմություն, այլ բարիքները նվաճում են ուժով։

Ուշադրության արժանի է հողի նախացանքային մշակության նրանց փորձը։ Աշնանը նախքան ցրտահերկ կատարելը, ճակնդեղի ցանքի տակ գրվող յուրաքանչյուր հեկտարում մտցվում է 35 տ գոմաղբ, 4,5 ց քիմիական գրանուլացված պարարտանյութ։ Այնուհետև 25—30 սմ խորությամբ

վար կատարել, ամբողջ տարածությունը մաքրել քարերից, ոչնչացնել կոշտերն ու ֆաստատուների բները։ Առաջիկա գարնանացանի համար նրանք այժմ ունեն այդպիսի պարարտ հող։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ «Զկալովի» անվան կոլտնտեսության ճանկնդեղագործները ձմեռվա ընթացքում եռանդուն աշխատանք էին կատարում դաշտում ձյան կուտակման, քիմիական պարարտանյութերի ծածկի տակ խնամքով պահելու գործում։

Լավ և ազնիվ աշխատանքը տալիս է առատ բարիքներ։ Կողք-կողքի գտնվող Սարահարթի և Գոգարան գյուղերի կոլտնտեսությունների աշխատանքով լիովին հաստատվում է առաջավոր փորձի հետևողական կիրառման արդյունքները։

Երկու կոլտնտեսությունների ճակնդեղի պլանտացիաները իրարից հեռու են հազիվ 3 կիլոմետր։ 1951 թ. Սարահարթը ցանել էր 43 հեկտար, իսկ Գոգարանը 53 հեկտար շաքարի ճակնդեղ։ Թեև այդ կոլտնտեսությունների հողակլիմայական պայմանները նույնն են և Գոգարանը ունի ճակնդեղի պլանտացիայի 10 հեկտարով ավելի ցանք, սակայն Սարահարթը պետությունից ստացավ մոտ 4 անգամ ավելի դրամ, քան Գոգարանը, բացի դրամական հատուցումից Սարահարթն ստացավ 180 ց շաքարավազ։

Ուշագրավ է, որ ստացված այդ գումարից ավելի քան 227 հազար ռուբլին Սարահարթում բաժանված է առաջավոր ճակնդեղագործներին։

Սարահարթի առաջավոր ճակնդեղագործներ՝ Բ. Սիմոնյանը, Ծ. Դավորդյանը և Ն. Քարամյանը ստացել են յուրաքանչյուրը 3000-ական ռուբլի։

Ճիշտ այդպիսի պատկեր են ներկայացնում կողք-կողքի գտնվող Արտագյուղի և Լուսաղբյուրի կոլտնտեսությունները։ Նրանցից առաջինի ճակնդեղի պլանտացիան կազմում է 116 հեկտար, իսկ երկրորդինը դրանից մի քիչ պակաս, սակայն ստացված արդյունքները տարբեր են։

Արտագյուղի Մոլոտովի անվան կոլտնտեսության ճակնդեղագործները մեծ համբավ են ձեռք բերել շնորհիվ այն բանի, որ նրանք մրցության մեջ միշտ շահում են առաջնություն։ Այդ կոլտնտեսության ճակնդեղագործները մեծագույն ուշադրությամբ հետևում են առաջավորներին և նրանց փորձը ընդօրինակում և կենսագործում են իրենց մոտ։

Գիտության և առաջավորների փորձի հիման վրա անցած տարի նրանք ճակնդեղի երկշարք ցանք կատարեցին 52 հեկտար տարածության վրա և աշխատանքային 3 օրում ավարտեցին ցանքը։ Սեղմ ժամկետում կատարվեցին նաև հետցանքային մշակության մյուս աշխատանքները։

Լիարժեք էին հատկապես «ճամփի տակ» կոչվող հողամասի այն հեկտարները, որտեղ տեղադրված էր երկշարք ցանքը։ Այդ միևնույն տարածության վրա օգակավարուհիներ Անահիտ Ոսկանյանի և Ադունիկ Սերոբյանի երկշարքանի ցանքի կատարած յուրաքանչյուր հեկտարում առկա էր ավելի քան 160 հազար արմատ, իսկ սովորական ձևով ցանված տարածություններում հազիվ 110 հազար արմատ։ Ունենալով լիարժեք հեկտարներ, «Մոլոտովի» անվան կոլտնտեսությունը նվաճեց բարձր բերք։ Նախորդ տարվա համեմատությամբ 1951 թ. յուրաքանչյուր հեկտարից հավելյալ բերքը կազմեց 80 ցենտներ։ Եթե 1950 թվականի 116 հեկտարից հավաքված էր 10975 ց, ապա 1951 թ. նույն տարածությունից հավաքվեց 19176 ց շաքարի ճակնդեղի բերք, այսինքն՝ 9 հազար ց. ավելի, քան նախորդ

տարին։ Եթե հարցնեն կոլտնտեսականներին, նրանք այս երևույթը կբացատրեն երկշարքանի ցանքի միջոցով և լիարժեք հեկտարներ ունենալու փաստով, և դա միանգամայն ճիշտ է, որովհետև Արտագյուղի պլանտացիային ուղղակի կպած Լուսաղբյուրի կոլտնտեսությունը ոչ լիարժեք հեկտարներից ստացավ խիստ ցածր բերք։ Այստեղ խնդիրը լոկ այն չէ, որ Լուսաղբյուրը չուներ երկշարքանի ցանք, այլ այն, որ այդ կոլտնտեսության ղեկավարները, ճակնդեղագործները, չգտեցին ստեղծելու լիարժեք հեկտարներ։ Զրուսած տարածությունների վրա նրանք զլացան վերացանք կատարել թրջված սերմերով, ստուգման ժամանակ երկրորդական նշանակություն տվեցին սածիլման աշխատանքներին։ Հետևանքը եղավ այն, որ չնայած արմատների խոշորությանը, մեկ հեկտարից ստացվեց 139 ց, իսկ 90 հեկտարից Լուսաղբյուրը հավաքեց հազիվ 12568 ց բերք, և այդ պատճառով չկատարվեց ճակնդեղի հանձնման պետական առաջադրանքները։

Շաքարի ճակնդեղի երկշարքանի ցանք կատարելու մեկ տարվա փորձը ակնառու կերպով ցույց է տալիս նրա առավելությունները։

Ուսումնասիրելով մեր ճակնդեղագործների փորձը, կարելի է հանգել այսպիսի եզրակացության.

Լիարժեք հեկտարը բարձր բերքատվության վճռական գործոնն է։ Նրան հասնելու համար պետք է ունենալ կոնդիցիոն սերմ։ Այդ սերմը ցանել համաչափ հեռավորության վրա. խոսքը շարքերի և բույսերի հեռավորության մասին է։ Չնայած մեքենայական մշակման որոշ ժամանակավոր դժվարություններին, անչափ մեծ են նոր ձևի ցանքի առավելությունները՝ բերքատվությունը բարձրացնելու գործում։

Ստացվել է 7 I 1952

С. Н. Ншанян
Секретарь Спитакского райкома КП(б)А

Некоторые преимущества двухстрочного посева сахарной свеклы

Резюме

До недавнего времени считалось, что полноценными являются такие гектары, на которых имеются 100—110 тыс. корней сахарной свеклы. Опыт передовиков показал, что необходимо пересмотреть существующее положение и количество корней сахарной свеклы на одном гектаре значительно увеличить. Такое количество растений можно обеспечить при условии посева сахарной свеклы новым способом. При двухстрочном посеве расстояние между первым рядом составляет 45—50 см., между вторым—20 см. Расстояние между растениями 18 см. При таких расстояниях растениям обеспечиваются нормальные условия для роста и развития сахарной свеклы.

Применяя указанный способ посева, некоторые колхозы Спитакского района добились больших успехов. В статье приводятся фамилии передовых колхозов и колхозников, которые, применяя новый способ и обеспечив хорошую агротехнику, получили весьма значительный доход. Так, например, колхозы сел. сел. Сараарт и Гогаран отделены друг от друга расстояниями в 3 км. и находятся в одинаковых почвенно-климатических условиях, однако, благодаря хорошо организаванной работе, применяя двухстрочный способ посева свеклы и обеспечивая хорошую агротехнику, колхозники сел. Сараарт от урожая сахарной свеклы с площади 43 га получили доход от государства деньгами более чем в четыре раза, чем колхозники сел. Гогаран с площади 53 га, которые недооценили значения передовой агротехники.

Новый способ посева сахарной свеклы в Спитакском районе, предложенный Институтом генетики и селекции растений АН Арм. ССР, в виде опыта в разных колхозах был распространен на 80 га. Урожай с контрольных участков, посеянный обычным способом, в среднем составил 196,3 ц. с га, а с двухстрочных посевов—357,5 ц. с га., превышение составляет 161,2 ц. Следует отметить, что остальные все агротехнические мероприятия на обоих участках как по характеру, так и по времени были одинаковыми.